ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ՊԱՏՄԱՇՈՒՆՉ ՀԱՐԿԻՑ ՆԵՐՍ

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 130-ամյակի հոբելյանական հանդիսությունների շրջանում, դեկտեմբերի 3-ին, Հայաստանի Ազգային Արխիվում բացվեց **«Գևորգյան Ճեմարան»** արխիվային ֆոնդի ցուցադրությունը, որը Հայաստանի Ազգային Արխիվի և Մայր Աթոռի Արխիվի համագործակցության երախայրիքն էր:

Բացման խոսքով հանդես եկավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Արժանապատիվ Տ. Եղիշե ավագ քահանա Մարգսյանը, ով Հայաստանի Ազգային Արխիվի տնօրինությանն ու աշխատակիցներին փոխանցելով Նորին Սրբություն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոսի օրհնությունն ու բարձր գնահատանքը՝ անդրադարձավ Գևորգյան Ճեմարանի անցած ուղուն, նշանավոր ճեմարանականների գործունեությանը, ինչպես նաև այսօր Ճեմարանում կատարվող բարեփոխումներին և մերօրյա ճեմարանականներից՝ հավատավոր հայ ժողովրդի ու Մայր Եկեղեցու ունեցած ակնկալիքներին: Խոսք ասացին նաև Հայաստանի Ազգային Արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանը, ցուցադրության բացմանը մասնակից պաշտոնատար այլ անձինք, ինչպես նաև նախկին ճեմարանական, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս, երգիչ Թովմաս Պողոսյանը: Այնուհետև Հայաստանի Ազգային Արխիվի Փաստաթղթերի օգտագործման, հրատարակման և աշխատանքների կազմակերպման բաժնի վարիչ Մարինե Մարտիրոսյանը ներկայացրեց Ազգային Արխիվում պահպանվող «Գևորգյան Ճեմարան» արխիվային ֆոնդը՝ նշելով, թե երբ և ինչպես է այն բերվել Ազգային Արխիվ, ինչպիսի արխիվային նյութեր են առկա այդ ֆոնդում, անդրադառնալով նաև ցուցադրված նյութերին, որոնք արտացոլում են Գևորգյան Ճեմարանի գործունեությունը՝ 1870-ական թվականներից մինչև մեր օրերը: Ցուցադրված նյութերը եզրափակում էին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի նորօրյա առաքելության վերաբերյալ վավերագրերն ու լուսանկարները:

Ցուցադրության բացմանը մասնակցում էին եկեղեցականներ, Գևորգյան Ճեմարանի և այլ ուսումնական հաստատությանց դասախոսներ, մշակութային գործիչներ, ուսանողներ:

Ներկայացված արխիվային նյութերը դիտելուց հետո Հայաստանի Ազգային Արխիվի հանդիսությանց սրահում տեղի ունեցավ համերգ՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սանուց երգչախմբի և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողուհի՝ Հինուհի Ռ Մեյի մասնակցությամբ: Համերգից առաջ խոսք ասաց Մայր Աթոռի Արխիվի տնօրեն Արժանապատիվ Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը.

«Ամենից առաջ գալիս ենք մեր շնորհակալությունն ու երախտագիտությունն արտահայտելու Հայաստանի Ազգային Արխիվի տնօրինությանն ու աշխատակազմին, որ այսօր, ամենայն սիրով, բաց եք արել այս պատմաշունչ հարկի դռները և, ի նշանավորումն Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 130-ամյա հոբելյանի, կազմակերպել հայոց Հոգևոր Կանոնի արխիվային փաստաթղթերի ու նյութերի ցու-

ցաղրությունը: Ուրախ ենք նաև Հայաստանի Ազգային Արխիվի և Մայր Աթոռի Արխիվի համագործակցության այս երախայրիքի համար:

Դիրավի, ազգային-եկեղեցական մեր կյանքում նվիրական հաստատություն է Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, քանի որ այս դարբնոցից են դուրս գալիս հայ իրականությունում Աստծո կենաց խոսքը քարոզող նվիրյալ եկեղեցականները: Քրիստոս Աստծո խոսքը, որ ուղղված էր Իր առաքյալներին՝ «ով ձե՛զ է ընդունում, Ինձ է ընդունում» (Մատթ. Ժ 40), սերտորեն աղերսված է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հինավուրց այս կրթօջախի հետ: Այո, քանի որ եթե հավատավոր հայն ընդունում է իր հոգին սնուցանող ու խնամող հայ հոգևորականին, ապա նա նաև ընդունում է նրան իբրև «հոգու մարդ» կերտված հաստատությանը, որ օրինյալ է քրիստոնեական ուղղափառ հավատքի դավանությամբ և մեր սուրբ հարց ավանդույթներով: Հաստատություն, որ ամեն մի ճեմարանականի կյանքում Մեծ Վարդապետի՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ առաքելությունն է իրականացնում. զինում է հավատագործության հոգևոր ասպառազինությամբ և ի հայս առաքելության կոչում: Հետևաբար, ինչպես մեր Տիրոջ երկրավոր կյանքի ու Նրա Սուրբ Եկեղեցու պատմության իմացումն ու ճանաչումը ջատագովանց էական է յուրաքանչյուրիս համար, այնպես և, կարծում ենք, հոգեմտավոր նկարագիր կերտող այդ սուրբ հարկի՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի պատմական ընթացքի մասին քաջատեղյակությունը կարի անհրաժեշտ է, որպեսզի իրապես ճանաչելով նրան՝ ի զորու լինենք ճանաչելու նրանից ճառագող և հայոց կյանքում լույս սփռող հայ եկեղեցականներին՝ մերազնյա ամենաամբարական բարի և քաջ հովիվներին:

Հոգևոր այդ կանառի մասին քաջիմացությունը, մանավանդ, կարևորվում է հայ իրականության մեջ գոյություն ունեցող մյուս բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, որոնք իրականում ոչ այլ ինչ են, եթե ոչ հայոց կրթական հաստատությանց մայր պանծալի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հարազատ զավակները: Առաքելության քաջիմացություն, որպեսզի մերօրյա ԲՈՒՀ-երը ոչ միայն գիտելիքներ ու գիտություն ավանդեն, այլև իրենց նվիրական գրրկում ուսանող երիտասարդներին Մայր Եկեղեցու սուրբ հավատքով սնուցանելու բարեպատեհություն ընձեռեն. «...Ճանաչենք Քրիստոսի սերը, որ գերազանց է, քան ամեն գիտություն, որպեսզի լցվենք Աստծո լրիվ ամբողջությամբ», - պատգամում է Սուրբ Պողոս առաքյալը (Եփես. Գ 19):

Միավասիկ, հարգարժան ներկաներ, այս առումով, ինչպես ամեն մի ժողովրդի, կառույցի ու հաստատության, սույնպես և Գևորգյան Հոգևոր Ճեմարանի պատմության լիարժեք իմացման համար մեծ կարևորություն ունի այդ կրթօջախի ծառայությամբ գոյացած ամեն մի վավերագիր: Հետևապես, հարկ է միշտ հիշել այն ճշմարտությունը, որ անցյալից մեզ փոխանցված գեթ մեկ պատառիկը՝ սուրբ մասունք է, փոքրիկ ճրագ, որը լուսավորում է դվյալ պատմության մեծամասավալ կտավի թեև փոքրագույն, բայց գրեթե միշտ արժեքավոր մանրամասնություններ բացահայտող մի կտորը: Ահա թե ինչու անգին արժեք է Գևորգյան Հոգևոր Ճեմա-

րանի արխիվային հավաքածուն, որ այլևս մի քանի տասնյակ տարի խնամքով պահպանվում է Հայաստանի Ազգային Արխիվում և այսօր, ի դեմս մի քանի վավերագրերի, հանվել է ի տես մեզ ամենեցուս: Լիահույս ենք, որ առաջիկա տարվա ընթացքում, Հայաստանի Ազգային Արխիվի հետ համատեղ, լույս կընծայենք Գևորգյան Հոգևոր Ճեմարանի արխիվային վավերագրերն ու նյութերը՝ համալրելով Հայոց Եկեղեցու վավերագրերի հատորաշարքը: Առաջ Ասված:

Այս մտածումներով կրկին մեր շնորհակալությունն ենք հայտնում Ազգային Արխիվի տնօրինությանը՝ այս ցուցադրության համար: Մեծահույս ենք, որ բոլոր այցելուները թե՛ այսօր և թե՛ ցուցադրության առաջիկա օրերին այս սրահից դուրս են գալու ազնիվ հպարտությամբ և գոտեպնդված, քանզի Տիրոջ ողորմությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր կրթօջախը նույն եռմիությամբ և նույն նախանձախնդրությամբ հայոց կյանքում շարունակում է կյանքի կոչել իր բացառիկ առաքելությունը՝ ի փառս Աստծո, ի լուսավորություն և ի փրկություն հավատավոր հայ ժողովրդի»:

Այնուհետև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դասախոս Հոգեշնորհ Տ. Վարդան աբեղա Նավասարդյանի խմբավարությամբ ճեմարանականները կատարեցին հոգևոր երգեր: Ճեմարանական երգչախմբի կատարմամբ հնչեց նաև Արժանապատիվ Տ. Թովմա քահանա Անդրեասյանի հեղինակած «Զոնը», որն ընծայել էր Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 130-ամյա հոբելյանին: Ճեմարանի սանուց հոգեզմայլ երգեցողությունից հետո հանդես եկավ չինուհի երգչուհին՝ բարձրարվեստ կատարելով Կոմիտաս Վարդապետի, Արմեն Տիգրանյանի և Բարսեղ Կանաչյանի երաժշտական ստեղծագործություններից:

Համերգային այս ծրագրով էլ եզրափակվեց «Գևորգյան Ճեմարան» արխիվային ֆոնդի ցուցադրության բացմանը նվիրված արարողությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԲԱԺԻՆ